ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9- 1
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
10.11.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքներին ներկա են ավագանու 27 անդամները, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ.Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Ս.Բալաբեկյանը, Գ.Աֆյանը, Ս.Հովհաննիսյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը հայտարարեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 64-րդ հոդվածի նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:Քանի որ ներկաներից տարիքով ավագը «Միասնական համայնք» դաշինքից ընտրված ավագանու անդամ Նորայր Վարդանյանն է՝ ուստի նա հարվիրվեց զբաղեցնելու նախագահողի տեղը և վարելու ավագանու նիստը:

Համայնքի ավագանու անդամ Նորայր Վարդանյանը նորընտիր ավագանու առաջին նիստը հայատարարեց բացված:

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու առաջին նիստի օրակարգը՝

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 64-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 02-ի Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 25-ի ընտրությունների արդյունքներով «Չարենցավան համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 11-Ա որոշումը և 2022 թվականի հոկտեմբերի 06-ի «Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N 11 արձանագրությունը, ***առաջարկում եմ.***

Հաստատել համամասնական ընտրակարգով ընտրված Չարենցավան համայնքի նորընտիր ավագանու 2022 թվականի նոյեմբերի 10-ի առաջին նիստի օրակարգը՝

1. Համայնքի ավագանու անդամների և ղեկավարի ներկայացում
2. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին:
3. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին:

Համայնքի ավագանու անդամ Նորայր Վարդանյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -27 դեմ - 0 ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Համայնքի ավագանու անդամների և ղեկավարի ներկայացում

/Զեկ Ն.Վարդանյան/

Համաձայն ՀՀ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142.2-րդ հոդվածի 2-րդ մասի 2022 թվականի սեպտեմբերի 25-ին անցկացված ընտրությունների արդյունքով թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի կազմված արձանագրության «Չարենցավան համայնքի ավագանի ընտրվելու մասին» N 11-Ա որոշման և «Չարենցավան համայնքի ավագանու ընտրված անդամներ գրանցելու մասին» N 11 արձանագրության «Միասնական համայնք» դաշինքի թեկնածուների ցուցակի առաջին հորիզոնականում ընտրված ավագանու անդամ Հակոբ Կավալենկոյի Շահգալդյանը օրենքի ուժով համարվում է ընտրված համայնքի ղեկավար, ներկայացվում են նաև համայնքի ավագանու անդամները՝

« ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ » ԴԱՇԻՆՔ

Հակոբ Շահգալդյան, Նորայր Վարդանյան, Տարոն Եփրեմյան, Արսեն Խլղաթյան, Մնացական Պողոսյան, Մելիք Գասպարյան ,Կարեն Դավթյան, Սարգիս Վարդանյան, Նորայր Առաքելյան, Արայիկ Բաբայան, Սևակ Վարդանյան, Գևորգ Գևորգյան , Վարդան Մակինյան, Բաբկեն Եփրեմյան

« ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ » ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Արթուր Գալստյան, Նարեկ Բաբայան, Աննա Բալյան, Գառնիկ Սահակյան, Նորիկ Վարդանյան, Լիլիթ Հարոյան, Գարիկ Ղաժբարյան, Գարիկ Պալյան, Նունե Թադևոսյան, Արշակ Խաչատրյան, Սահակ Բաղդասարյան

« ԱՊՐԵԼՈՒ ԵՐԿԻՐ » ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Անահիտ Խեչոյան, Դավիթ Պապոյան

Համայնքի ավագանու անդամ Նորայր Վարդանյան

Լսեցին.

2. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպչական հարցերի մասին:

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 74-րդ հոդվածի պահանջներով՝ ***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի երդման արարողությունն անցկացնել 2022 թվականի նոյեմբերի 12 -ին, ժամը 11:00-ին:
2. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի երդման արարողությունը կազմակերպել հասցեն՝ Չարենցավանի համայնքապետարան, Կ. Դեմիրճյանի անվան, հրապարակ 1:
3. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի երդման արարողությանը հրավիրել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, Կոտայքի մարզպետարանի, Հայ Առաքելական Եկեղեցու Կոտայքի թեմի ներկայացուցիչների :
4. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ղեկավարի երդման արարողության կազմակերպման պատասխանատվությունը դնել Չարենցավան համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սուրեն Մուրադյան վրա:

Համայնքի ավագանու անդամ Նորայր Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-27 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը սահմանելու մասին:

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի պահանջներով ***առաջարկում եմ.***

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի գումարման օրը և ժամը սահմանել 2022 թվականի դեկտեմբերի 01-ը, ժամը 12:00:
2. Նիստը կազմակերպել Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ Չարենցավանի համայնքապետարան, Կ. Դեմիրճյանի անվան հրապարակ 1:

Համայնքի ավագանու անդամ Նորայր Վարդանյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-27 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Առաքելյան Նորայր

Բաբայան Արայիկ

Բաբայան Նարեկ

Բալյան Աննա

Բաղդասարյան Սահակ

Գալստյան Արթուր

Գասպարյան Մելիք

Գևորգյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Խեչոյան Անահիտ

Խլղաթյան Արսեն

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Շահգալդյան Հակոբ

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Պալյան Գարիկ

Պապոյան Դավիթ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստը վարեց Նորայր Վարդանյան _____

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան _____